ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷԹՆԻԿ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Ռ. Հ.

Հայոց ցեղասպանության պատճառների փնտրտուքում առանձնակի կարևորվում է գենետիկ կոդի և ազգային-հոգեբանական գործոնի դերը. ոչ թե ուժեղ-թույլ (զավթիչ-զոհ) կտրվածքով, այլ թուրքերի էթնիկ-նվաճողական ագրեսիայի և հայոց մեղմ-քրիստոնեական հոգեկերտվածքի հակադրությամբ:

Իր բնօրրանում՝ իր իսկ տարածքի վրա կազմավորված հայ ժողովուրդը, լինելով նստակյաց երկրագործ, երբեք չի ունեցել նվաճողական նկրտումներ. «աչք չի դրել օտարի երկրին, բայց եղել է իր երկրի քաջ պաշտպանը»[1] և իր հավատքով միշտ խաղաղասեր է, աշխատասեր ու շինարար: Այս առումով, ժողովրդական բանահյուսության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում ազգային տիպական հատկանիշներն ու առանձնահատկությունները խտացնող հաստատուն մակդիրները՝ յուրատիպ պատմահոգեբանական դրսևորումներով, որոնք վերաճել են ազգային գեղարվեստական ընկալման չափանիշների[2]: Հմմտ. հնում հայոց աստվածներին ու թագավորներին տրվող՝ *=հյուրընկալ, =օթևան տվող, =օտարասեր, =ողորմած, =բազումողորմ,* օրինավոր, *=արդարադատ, =քաջակորով, = աշխարհաշեն* և այլ առդիրները:

Աստված-թագավոր-հերոս կապով ընդհանրացած այս հաստատուն մակդիրների *ազգային բնույթը ժողովրդի ազգային ոգին է*[3]*:* Հմմտ. Մերձավոր Արևելքում տարածված՝ թագավորներին նվիրված գովքերն ու պատերազմի ժամանակ կատարվող զինվորական երգերը[4]:

Հայը ի ծնե ազնվական է, երախտագետ, բարի ու միաժամանակ՝ ըմբոստ, երբ վիրավորում են իր էթնիկ արժանապատվությունը [հմմտ. թուրքերի կողմից հայերին տրվող՝ =գյավուր (անհավատ) և =գյավուր օղլի (անհավատի տղա)], էթնիկ ինքնասիրությունը անարգող, հավատն այպանող արտահայտությունները: Նվաստացնող այս դիմելաձևը բազմիցըս հանդիպում է Մեծ եղեռնի տարիներին հյուսված թուրքալեզու «գյավուր օղլի»[5] կամ «օլան գյավուր»[6] երգի տարբերակներում: Հայի ժառանգական կոդին հատուկ է ազգային արժանապատվությունը, անկա-

---

[1] ***Աբեղյան Մ.***, Հայոց հին գրական պատմություն, Ե., 1944, էջ 245:

[2] ***Խաչատրյան Ռ.***, Հաստատուն մակդիրներն իբրև ազգային պատմա-հոգեբանական դրսևորումներ. զեկուցումների հիմնադրույթներ, Ե., 1998, էջ 11-13:

[3] ***Հեգել***, Բուն էպոսի առանձին հատկանիշները (Խորհրդային գրականություն, 1939, N 1, էջ 139):

[4] **Лео А.,** *Оппенхейм. Древняя Месопотамия, М., 1999, с. 18.*

[5] ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ, Ռ. Խաչատրյանի ֆոնդ, FRI (այսուհետև՝ FRI): 3183-3184:

[6] ***Սվազլյան Վ.***, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Ե., 1994, էջ 167-168:

խության ձգտումը, ոգեղենությունը, հաղթողի ներուժն ու վճռականությունը [հմմտ. «գյավուր օղլի» տրամախոսությամբ հորինված երգում՝ հայ ֆիդայի-մահապարտի պատասխանը թուրքին՝ (աջ ձեռքով զըրգեր իմ, էրտված իմ՝ չը՛մ ըսի)]: Հիշենք հայ ժողովրդին մարմնավորող Սասունցի Դավթի կերպարն ու շիտակ խառնվածքը. բարի էր, ազնիվ ու ծուռ՝ բնութագրելով իր իսկ ժողովրդին ու արյունակից սասունցիներին, այն իր բանաձևումն է գտել Սասնո ժողովրդական երգերում.

=Ուր կուժը թաց, ուր թոնիր հաց,
Ուր ծին ու թուր՝ քարին բահաձ,
Օդարին՝ բաց ուր սիրդն ու դուռ,
Օծ լը բիլը անթույն ու ձուռ[7]:

Ինչքան բարի էր, ազատասեր, խաղաղասեր, նույնքան անողորմ ու անզիջում՝ թշնամու հանդեպ (հմմտ. Դավթի դիմումը Մսրա զորքին).

= Գացե՛ք ձեր երկիր,
Դուք ձեր համար խաղաղ ապրեք,
Չնեմ-չիմանամ, օր մեր խողի
Ու երկրի վրա՝ աչկ ունենաք[8]*:*

Հավատքի՝ քրիստոնեական բարոյագիտության, ազգային ավանդույթների ու հայոց նախահայրերի, էթնիկ նախնիների պաշտամունքը ամրակայված է հայի հոգեբանության մեջ: Հմմտ. պատումներից մեկում՝ Դավթի աղոթքը Մարութա սուրբ Աստվածածնի վանքում՝ բարեխոս Տիրամոր տաճարում. «Ով Թորգոմի, Արամի ու մըր պապերի աստվա՛ծ, տուր ըմ մանուկ թևերուն զորուտեն, ուար կըռնամ կոտրըմ զքու սուրբ կրոնի նաեարնին, ու ըր դրած ին ուրանց մտքին՝ գոդորին ուար ք'անվան մգրտվող ժողովրդվուն և բղձին զքու Սուրպ տաճառնին»[9]:

XI դարում Արևմտյան Հայաստան ներխուժած և XV-XVI դդ. հայերի պատմական հայրենիքում հաստատված թուրքերը համոզվեցին, որ հայը չէր կարող հանգիստ ապահովել իր տարածքը բռնազավթողին: Ոճրագործ Թալեաթի ահազանգը Հալեպի նահանգապետին, որ հայերն այդ տարածքի վրա (իրենց իսկ հայրենիքում) թուրքերին հանգիստ չեն տալու, դարեր ի վեր եղել է մեր թշնամիների վախն ու անհանգստությունը: Հմմտ. բյուզանդական Մորիկ կայսեր նամակը պարսից Խոսրով թագավորին, որ հայերին որակում է «Ազգ մի խոտոր և անհանգիստ», «Զի եթե դոքա յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանգչիլ ո՛չ լինի»[10]: Հայրենիքի, ցեղային ինքնաճանաչման, ազգային արժանապատվության

---

[7] *FRI: 3311-3313.*

[8] Սասնա ծռեր, Ե., 2000, էջ 258 (նորահայտ պատումներ. գրառումը ***Ռ. Գրիգորյանի***՝ աշխատակցությամբ Երանուհի Մելիք-Մուրադյանի):

[9] Սասնա ծռեր, հ. Դ, Ե., 1999, էջ 120-121 (նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի):

[10] Պատմութիւն **Սեբեոսի** եպիսկոպոսի ի Հերակլն, Ս. Պետեբուրգ, 1879, էջ 47-48:

գիտակցումով, պատմական փառավոր անցյալի վերապրումով՝ հայը միշտ եղել է ազատասեր ու պատրաստ ինքնազոհության: Հմմտ. Միջնադարյան պանդուխտի ողբը.

= Ես էի ազատ *ազգեն.*
Եւ այժմ եմ՝ այլոց գերի:
=Կողոպտեաց *զիս թշնամին.*
=Զէլս (ցեղ) աստի յուզեմ գտանել[11]*:*

Ունենալով մարտական չմարող ոգի և թշնամու «քանակին» դիմագրավելու, հաղթելու բնատուր ռազմավարություն, ժառանգական ոգեղենություն և բարձունքներում ու լեռներում կռիվ տալու ռազմունակություն (հմմտ. մ.թ.ա. IX դարում Արամ թագավորի հաղթական ճակատամարտերը լեռներում[12]), արևմտահայերը Թուրքիայում զրկված էին նույնիսկ զենք կրելու իրավունքից և անասելիորեն հարստահարվում էին իրենց իսկ թշնամուն՝ թուրք, քուրդ բեկերին հարկ ու տուրք վճարելով: 1896թ. գրած «Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան» հոդվածաշարում Ռ.Լյուքսեմբուրգը փաստում է, որ Թուրքիայում քրիստոնյան անգամ զենք կրելու իրավունք չուներ[13]: Այդ են վկայում Սասնո ազգային-ազատագրական, ռազմահայրենասիրական երգերում արտացոլված՝ անզեն հայերի ընդվզումն ու ինքնապաշտպանական մղումները.

= Խըբար դարեք դերության՝
Հըր ե՞պ քանդին զՀայաստան[14]:

=Անոթի՛, ձառա՛վ, ա՛ղ լը չմնաց,
Արմա՛ղ գ՛գրձինք, չընք ուզի մեք հաց,
Միայն թե դվեք մեզ մեգ-մեգ ձագ էրգա՛թ,
Ընդո՛վ մենք Սասուն ու զՄուշ գըզըդինք:

=Մենք քա՛ր գիալցունք , ճուր՝ տառցունք էրգաթ,
Ափսոս չի՞նք մնանք վադ տաճկին հբադագ[15]:

Ոճրագործ թուրքերը շատ լավ էին զգում հայոց ինքնապաշտպանական ձգտումներն ու ներուժը, և պատահական չէր, որ եղեռնագործ Թալեաթը հրամայում էր ոչնչացնել հատկապես արու զավակներին, քանզի կանխազգում էր, որ նրանք ապագայում ձգտելու են արդար վրեժի: Հիշենք աստվածաշնչյան պատվիրանը Նոյին. «Ով մարդու արյուն թափե, նորա արյունը մարդո՛վ թափվի» (Ծննդոց գ. 9):

---

[11] ***Մնացականյան Աս.***, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր (այսուհետև՝ ՀՄԺԵ), Ե., 1956, էջ 546-548:

[12] ***Իշխանյան Ռ.***, Պատկերազարդ պատմություն հայոց, Ե., 1989, էջ 137:

[13] ***Ղարիբջանյան Գ.***, Ռ. Լյուքսեմբուրգը և Կ. Լիբկնեխտը հայ ժողովրդի մասին, Ե., 1971, էջ 45-46:

[14] ***Խաչատրյան Ռ.***, Թալին [Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 19, Ե., 1999, էջ 164]:

[15] ՀԱԲ, հ. 19, էջ 157:

Թուրքերի հայաջնջման քաղաքականության, բռնությունների և պան-թուրքիստական ծրագրերի մեջ էր մտնում բռնի իսլամացումը՝ վկայված նաև ժողովրդագիտական նյութերով: Հմմտ. միջնադարյան երգային բանահյուսության մեջ («Հովհաննես և Աշայ»).

=Տաճկեցուցենք՝ անենք մօլա,
Լազըմ չի խայ քահանայ,
Մե լազըմ ի՝ տաճկի մօլա[16]*:*

Ականատեսների հուշապատումներն ու վկայությունները (Արաբոն սպանում է առաջին գիշերվա իրավունքը խլող թուրք փաշային ու նրա զինվորներին)[17], ինչպես նաև երգային բնագրերը բազմիցս փաստում են թուրքերի վայրի ու անբարո բռնարարքները.

=Հոկի անուշ, քուրս հարգանուշ,
Պռնին թուրքիր՝ տաջգցրին Մուշ,
Հայրենիքիս ամփողջ մուլքեր
Պոլոր գրավին անօրան թուրքեր[18]*:*

=Զիմ խորոդ յար գդանուն
Թուրքի փաշին գդանուն
Ա՛խ, լե, լե վա՛խ լե, լե,
Վա՛խ լե, լե, ջան[19]*:*

Ցեղասպան թուրքերի եղեռնագործություններն ու տեղահանություն-ները տեղ գտան նաև հայ ժողովրդական օրորոցայիններում՝ դրանք շեղե-լով իրենց ժանրային հիմնական թեմայից (երեխայի գովք) և վերածելով դաժան իրականությունն արտացոլող պատմավավերագրական ողբերի.

=Քու հեր զըրգվի վըր Անդոկին
Արուն գերտը քար ու քռին,
Դուշման պռնէ գծորեր պոլոր,
Հայ հարսներ լե՝ մանցին մոլոր[20]*:*

=Սուգ ու շիվան պռնից Սասուն
Թուրքեր էգան՝ վառին մըր դուն
=Արազ գդրից արցունք - արուն,
Թուրքիր էնին մզի տադարգուն:
= Թուրքի դըրդից՝ էրիս մրոդիք,
Չիկեն - դանեն հարս խորոդիգ:
Ռուրի, ռուրի, Սուսան լառ[21]*:*

Թուրքերի ժառանգական կոդի մեջ նստած էր հայերի (հույների և այլ ժողովուրդների) լավագույն հատկանիշներն ու արժեքները ոչնչացնելու, կործանելու բնազդը, որը ծնել է օսմանցուն բնորոշ՝ նենգ ու ամբարիշտ, էթնիկ-եղեռնաստեղծ ագրեսիան ու անհանդուրժողականությունը: Որ-քան մեծ են մարդու արժանիքները, այնքան մեծ է նրան կործանելու ցանկությունը: Այս ճշմարիտ ասույթ-բանաձևը գործում է ոչ միայն էթնոկիր-ավանդակիր անհատի, այլև էթնիկ գիտակցության մեջ ընդ-

[16] ՀՄԺԵ, էջ 205:
[17] ՀԱԲ, հ. 19, էջ 155:
[18] Նույն տեղում, էջ 150:
[19] Նույն տեղում, էջ 144:
[20] Նույն տեղում, էջ 151:
[21] Նույն տեղում:

հանրապես և գալիս է Աստվածաշնչից, ըստ որի՝ չարի արմատը պետք է փնտրել մարդկային առաքինությունների և առավելությունների մեջ: Եվ մի՞թե նույն չարության ու վայրագության մոլուցքը չի գործում այսօր՝ թուրքերի բռնարարքների ու անհանդուրժողականության մեջ: Համաձայն Հոբի ավանդապատումի՝ «Որդիները պետք է քավեն հոր, նախնիների մեղքերը, եթե նույնիսկ իրենք բոլորովին անմեղ են»[22]: Ցավոք, թուրքերը ոչ միայն ժխտում են ցեղասպանությունը, այլև նույն ցեղային բնազդով շարունակում են ոճիր գործել նոր դարի շեմին: Այդ են վկայում մերօրյա անասելի, հրեշավոր վայրագությունները Սումգայիթում ու Բաքվում՝ նույն ցեղասպան թուրքերի ձեռագրով: Դա է ապացուցում XXI դարում, քաղաքակիրթ ազգերի աչքի առաջ հայ քնած երիտասարդ սպայի կացնահարումը՝ միմիայն հա՛յ լինելու համար: Արդարև, իրատեսական են ժողովրդական դիվանագիտությունն ու բանահյուսությունը. հայ ժողովրդի դարավոր իմաստությունը, կանխատեսումն ու ճշմարիտ ձայնը արտացոլվում են հայ ժողովրդական երգերում.

= Աստված մերժեց աղոթքն հայուն,
Եվրոպ՝ խուլ է մեր ողբերուն[23].
= Արդա՛ր է մեր կռիվը, վգա՛է Աստված,
Գփրգվին մեր հողերը, չունինք մենք կասկած[24]:
=Դեռ ճամփա ունինք պիտ հասնինք Սասուն
Քաջերի հողը մեզ է սպասում[25]:

Հավատավոր ու ազնիվ է հայը. չնայած բազմիցս վստահել ու հավատացել է իր հողում հաստատված դարավոր թշնամուն և տառապել ինքնախաբեությամբ, բայց ընդվզել ու մարտնչել է, երբ հայրենիքը վտանգի մեջ է եղել, երբ վիրավորվել են իր էթնիկ-մարդկային իրավունքն ու արժանապատվությունը, երբ իր պատմական հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, իսկ այսօր՝ Նախիջևանում պղծում ու ոչնչացնում են իր հոգևոր արժեքներն ու պապերի գերեզմանները (պատրիցիդ): Երիցս ճշմարիտ ու արդիական է հնչում հայոց Վազգեն Ա հայրապետի խորաթորհուրդ խոսքը. «Հայրենիքը օրգանապես ազգի մը օրրան է, ուր ալ ծնած ըլլաս, քու հայրենիքդ կմնա քու ցեղիդ, քու նախնիներուդ հողը»[26]: Ահա թե ինչի էին կոչված Արևմտյան Հայաստանում հայոց ազգային ոգին կրող, ազատագրական պայքարում ու կռիվներում թրծված հայրենապաշտպան ֆիդայիները, ինչպես նաև երկրապահ-կամավորները Արցախում, որոնք ազգի փրկության ու գոյապահպանման մահապարտ-ազատամարտիկները եղան՝ պաշտպանելու հայոց տունը, ընտանիքը, պատիվն ու հայրենիքը:

---

[22] ***Կոսիդոսկի Զ.***, Բիբլիական ավանդապատումներ, Ե., 1970, էջ 549:
[23] ***Ղազիյան Ա.,*** Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, Ե., 1989, էջ 116:
[24] Կենդանի կենցաղավարող երգային բանահյուսություն:
[25] *FRI:* 3195, 3198:
[26] **Վազգեն Ա** Հայրապետ հայոց, Կոնդակներ, քարոզներ, ճառեր, գ. III, Էջմիածին, 1976, էջ 125:

ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА И ЭТНОПСИХОЛОГИЧЕСКОГО ФАКТОРА В АРМЯНСКОМ ПЕСЕННОМ ФОЛЬКЛОРЕ

ХАЧАТРЯН Р. Г.

Резюме

Политика уничтожения армян со стороны турок – резня и депортация нашли отражение в фольклорных первоисточниках, в частности, в армянских народных песнях, в которых геноцид расценивается не просто в плане противопоставления сильного – слабому (агрессор – жертва), а как результат противопоставления этнически обусловленной агрессии турок и христианской терпимости армян.

Фольклорные источники явствуют о том, что армяне руководствуются постулатами христианской морали, следуя национальным традициям и живя по заветам этнических предков. Доказательством сказанного служит молитва Давида в монастыре св. Богородицы на горе Марута в армянском народном эпосе “Давид Сасунский”. Этому противопоставляется заложенная в этногенезе турок склонность к агрессии и нетерпимость к культурным ценностям иных народов, нашедшая отражение в народоведческих материалах.

Էրաբէր 1-15